

ՄՇԱԿ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակի եկող 1877 թվից
չաբաթը երկու անգամ: Տարեկան
գինը 7 ռուբլ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ունենեք արդեօք մենք մի կենդանի լեզու:—
Ներքին տեսութիւն: Հերամպահոթեան
մասին: Մի քանի խօսք մեր մամուլի մասին: Նա-
մակ Մոսկվայից: Նամակ Երևանից: Ներքին լու-
րեր:—Արտաքին տեսութիւն: Անցեալը և
ներկան: Թիւրքիա: Անդրիւս: Արտաքին լուրեր:
Յայտարարութիւններ:—Բ ա ն ա յ ի ռ ա կ ա ն:—
Մտտենագրութիւն

ՈՒՆԵՆԵՔ ԱՐԴԵՕՔ ՄԵՆՔ ՄԻ ԿԵՆԴԱՆԻ ԼԵ-
ԶՈՒ

Մեզ միշտ զարմացնում են այն զանգա-
տները, որ լսելով են շատ անգամ ժամանա-
կակից հայերից: մենք կենդանի լեզու չունենք,
մեր լեզուն դեռ շատ անկատար է, նրանով
ոչինչ չէ կարելի արտայայտել, և այլն....

Եւ շատ անգամ այդ զանգատները հասց-
նում են զանգատողներին այն եզրակացու-
թեանը, թէ՛ հարկաւոր է մեր կենդանի աշ-
խարհաբար լեզուն թողնել և նրա տեղ
գրաբար լեզուն դործածել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ

Mémoire sur la situation actuelle des
Arméniens et sur leur avenir
Respectueusement transmis aux Chancelleries
des grandes puissances
Par Seth A. Aparcar
Londres 1876

(Յիշատակարան հայերի ներկայ դրութեան և նը-
րանց ապագայի վրա, ներկայացրած մեծ պետու-
թիւններին, հեղ. Ա. Աբգարեանի)

Այս վերնագրով դուրս եկաւ ներկայ 1876 թը-
ւին մի փոքրիկ գրքիկ Լոնդոնում, ֆրանսիերէն
լեզուով:

Գրքիկը բաղկացած է ընդամենը 12 երեսից:
Հեղինակը նպատակ է ունեցել Եւրոպայի ու-
շաղիւթները դարձնել այն երկրի վրա, որ ընա-
կեցրած է ընդունալ քրիստոնեայ չորս միլիոնից
բաղկացած ժողովրդի և որին, կարծես, վաղուց է
որ ամբողջ Եւրոպան մտաւայել է:

Այդ երկրի՝ Հայաստանն է, այդ ազգը՝ հա-
յերն են:

Վստահութեամբ աշխարհի ծայրում, Ասիայում,
գտնվում է մի երկիր, մի ժամանակ երջանիկ և
ծաղկած, մարդկութեան սկզբնական օրօրոց, որ
գրեթէ մոռացված է ամբողջ Եւրոպայից, և որ
աղաչում է եւրոպական պետութիւններին, որ իր
ձայնը լսելի լինի այն րօպէին, երբ բոլոր արեւ-
ելեան քրիստոնեաների համար հասաւ արդա-
րութեան ժամը: Եթէ ճշմարիտ է որ մոլորան-
դութեան, ապօրինութեան և բարարութեան

Այդ զանգատներին աւելանում է մեծ
մասամբ և այն զանգատը, թէ մենք հայերս
չափից գուրս շատ այլ և այլ դաւառական
լեզուներ, բարբառներ ունենք:

Այդ բոլոր զանգատները մեզ շատ ան-
հիմն են երևում, որովհետեւ եթէ քննելու
լինեք ուրիշ ազգերի մէջ մայրենի լեզուի
պատմական զարգացման երեւոյթը, կը հա-
մոզվեք որ հայերս մի բացառութիւն չենք
կազմում, բայց որ նոյն կամ նման երեւոյթ-
ները եղել են և կան ամեն ազգի մէջ:

Քննութեան տակ գեղեցիկ ազգերի լեզուն,
մենք կը համոզվեք որ պատմութեան մէջ
նշանաւոր դեր խաղացող ազգերի լեզուները
մեծ մասամբ ունեին և ունեն իրանց մէջ երեք
գլխաւոր գործիչներ՝ այլ և այլ դաւառական
բարբառներ, որոնք երբեք չեն զարգանում,
միշտ անշարժ, կանգնած են լինում նոյն
կէտի վրա, որոնց զարգացման մէջ մագլի չափ
փոփոխութիւն անել անհնարին է, իսկ միւս
ծայրին տեղը բռնած ունի կրօնական մի
լեզու իր կատարեալ ձևերով, իր կատարելա-
գործված կազմակերպութեամբ:

Ուրեմն մի կողմից անշարժ, եթէ կարելի է
ասել մեռած դաւառական լեզուները, իսկ
միւս կողմից նոյնքան անշարժ, մեռած դա-
ւառական լեզուն: Այդ երկու ծայրերի մէջ զար-
գանում է նոր կենդանի, խօսեցած, աշխար-
հաբար լեզուն, որ հետզհետէ զարգանալով
ժողովրդի առօրեայ, կենսական, հասարակա-
կան, ուսումնարանական, առեւտրական, գիտ-
նական, մի խօսքով բոլոր կենդանի յարա-
բերութիւնների մէջ գործածական է դառ-
նում:

Այդ լեզուն է որ անուանվում է կենդանի,
աշխարհաբար, գրական լեզուն, նա է որ ա-

հինգ դարերի տիրապետութիւնը պէտք է վերջա-
պէս տեղ տալ խղճմտանքի ազատութեան, իրա-
ւունքի և ճշմարիտ առաջադիմութեան:—Հայաս-
տանը չէ կարող բարբարոսութեան տակ տանջվող
մնացած արեւելեան քրիստոնեայ ցեղերի թւում
միակ ազգ լինել որ պէտք է այնու ամենայնիւ
զրկված մնայ այդ ժառանգութեանից:

Եւ հեղինակը չարժանաւոր է ապացուցանել թէ
Հայաստանը չէ ներկայանում առանց իրաւունք-
ների, ներկայանում է ոչ թէ որպէս մուրացկան,
այլ որպէս մի երկիր, որպէս մի ազգ, որ իր հա-
րուստ անցեալը ունեցել է....

Գետոյ հեղինակը սկսում է նկարագրել այն ան-
միջիթար դրութիւնը, որի մէջ գտնվում է հայոց
ազգը Թիւրքիայում: Ամենաաշխատասէր, արդիւ-
նաբերող, չորս միլիոնից բաղկացած ազգ, ոչինչ չէ
կարող անել, չընդապառնում լինելով մօտ մի միլիոն
կողոպտիչ, հարստահարող, աւազակ ցեղերով, ինչ-
պէս քուրդերը, ախաբները և չէրկէզներն են: Բո-
ւորը, ինչ որ ժողովուրդը արդիւնաբերում է, նրանից
կողոպտում են, խլում են: Նա ոչինչ իրաւունքներ
չունի, նա աւազակութիւնների, հարստահարու-
թիւնների դէմ իրան պաշտպանելու համար իրա-
ւունք չունի զէնք գործ ածել....

Այդ տեսակ անբնական դրութեան ժամանակ
հասկանալի է թէ ինչի հայերը մինչև այժմ չը
կարողացան բարեօրէն իրանց դրութիւնը, չը կա-
րողացան առաջադիմութիւն անել, իրանց նիւ-
թապէս ապահովել, չը նայելով որ այդքան աշ-
խատասէր են:

Բայց չը նայելով այդ բոլոր թէ նիւթական, թէ
բարոյական արեւելքների, հայոց երիտասարդու-
թիւնը, հայոց նոր սերունդը այնու ամենայնիւ կա-
րողացան հասկանալ թէ որքան անհրաժեշտ է
եւրոպական լուսաւորութիւնը, միշտ ցոյց տուեց
մեծ ձգտում դէպի ուսում և կարողացաւ թէ Եւ-
րոպայի, թէ Ամերիկայի լուսաւորված կենտրոն-
ներում ուսում առնելով, իրանց եւրոպական

նուանվում է մի ազգի մայրենի լեզուն: Նա
երբեք կատարելութեանը հասնել չէ կարող,
այլ միշտ պէտք է շարժման մէջ գտնվի,
զարգանայ: Եթէ նա մի անգամ կը հասնէ
կատարելութեանը, կատարեալ ձևերին, —
նշանակում է որ ազգն էլ որի հոգեւոր, բա-
րոյական և մտաւոր կենսի արտայայտու-
թիւնն է համարվում նա, հասնէ է կատարե-
լութեան այնպիսի մի աստիճանի, որից յետոյ
հեռուում է անկում կամ մահ: Միայն այն
երեւոյթները կենդանի են, որոնք կարող են
միշտ կատարելագործվել: Իսկ կատարելա-
գործութեանը հասած երեւոյթները՝ մե-
ռած է:

Ի զուր են կարծում որ եւրոպական լե-
զուները՝ ֆրանսիականը, գերմանականը, իտա-
լականը կամ անգլիականը կատարելութեան
են հասնել:—Ոչ, նոքա միշտ զարգանում են և
զարգեալ կատարելագործվում են: Ի զուր են
կարծում նոյնպէս որ այդ լեզուները միշտ
այն էին, ինչ որ այժմ են: Ֆրանսիական լե-
զուն Բաբելէի ժամանակ, կամ գերմանական
լեզուն Լուծիլից առաջ շատ անձուռնի, ան-
տաշ և անկատար էին, բայց կատարելապէս
համապատասխան էին ժողովրդի այն ժամա-
նակի պահանջներին: Մի կենդանի լեզու կա-
րող է շատ անտաշ, անկատար լինել:—Բայց
եթէ ազգը կենդանի է, լեզուն միշտ համա-
պատասխան է լինում ազգի րօպէական պա-
հանջներին: Երբ որ ազգի բարոյական և մը-
տաւոր պահանջները ընդարձակվում են, նրա
հօրիզոնը լայնանում է,—լեզուն էլ համա-
մաստ ազգի պահանջներին հետզհետէ զար-
գանում է:

Մեր դրութիւնը այդ կողմից նոյն է, ինչ
որ ամեն ուրիշ ազգի: Մենք ունենք մեր

լուսաւորութեան արգասիքը, այնպէս որ կարելի է
ասել որ այս րօպէիս հայոց ազգը ունի իր ծո-
ցում բոլոր հարկաւոր հիմունքներ, որոնք անհրա-
ժեշտ են ապագայում լուսաւորութեան մի հաս-
տատ կենտրոն կազմելու համար, որտեղից պէտք է
տարածվի կրթութիւնը Ասիայի այդ մասում, Փոքր-
Ասիայում:

Այդ իրաւունքը արգարև պատկանում է հայոց
ազգին, որ մեծ ծառայութիւններ արած ունի հին
աշխարհի մէջ, որտեղ նա ունէր իր փառաւոր
անցեալը և որի հողը նա այդքան դարեր արգա-
ւանդ է անում իր արիւնով և քրտինքով....

Եթէ Եւրոպան, ասում է հեղինակը, ճշմարիտ
սրտով ցանկանում է վերջ տալ խաւարի և բար-
բարոսութեան թագաւորութեանը, որոնց մէջ ըն-
կրմված է զանազան աղբորթիւններից բաղկացած
քսան միլիոնի ժողովուրդը, նա հայերի մէջ կը
գտնի իր սկզբնաւորութեան մէջ նպաստելու հա-
մար մի ընդունակ, մի յարմար տարր, մի ազգ
որ բոլոր յատկանիշներ ունի այդ ճշմարիտ մար-
դասիրական գործը կատարելու:

Ահա հայերի յոյսերը որ նոքա Եւրոպայի, լու-
սաւորված աշխարհի վրա են դնում:

Գետոյ հեղինակը ցոյց է տալիս որքան վտան-
գաւոր կը լինէր, եթէ Եւրոպան մտածէր միմիայն
Թիւրքիայի քրիստոնեաների մի մասի դրութեան
բարելաւացնելու վրա, և հայերի վրա չը մտածելով,
այդպիսով կը սաստկացնէր մահմետական տարրի
կատաղութիւնը ասիական քրիստոնեաների դէմ:

Եթէ Եւրոպան ազգաւոր միայն Բօսնիայի և Հեր-
ցեգովինայի նահանգները Թիւրքիայի լուծից, ա-
ռանց ազատելու ասիական նահանգները,—հայերի
տանջանքները, որոնք այժմ էլ անտանելի են, կը
կրկնապատկւէին:

Հայերը չեն հաւատում Թիւրքաց տէրութեան
խոտտումներին, ասում է հեղինակը:

Եթէ մինչև անգամ Թիւրքաց բարձր կառավա-
րութեան ներկայացուցիչները ուղենային էլ ան-

անշարժ զաւառական բաղմամբ լեզուները,
մենք ունենք մեր մեռած կրօնական լեզուն,
որ չը պէտք է արհամարհենք, այլ պէտք է
ուսումնասիրենք, մենք վերջապէս ունենք և
մեր կենդանի, գրական աշխարհաբար լեզուն,
որ այդ երկու ծայրերի մէջ միջին տեղն է
բռնում և որքան անկատար էլ լինէր, հեռու-
հեռու զարգանում է և պէտք է զարգանայ,
համեմատ իրան ազգի զարգացման պահանջ-
ներին:

Իսկ եթէ մենք մեր ազգային զարգացման
մէջ ունենք մի անյարմարութիւն, որ չունեն
ուրիշ ազգերը՝ այն է որ մեզանում զար-
գացել են երկու մեծ, միմիանցից քիչ շատ
տարբեր աշխարհաբար լեզուներ՝ արեւմտեան
և արեւելեան, Թիւրքիայի և Ռուսաստանի
հայոց լեզուն,—այդ մեր քաղաքական բա-
ժանման զգալի հետեւանքն է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Քանի որ մեզանում այս վերջին տարի-
ներում շերամապահութեան վրա հասած
անյարմարութիւնը Աստուածանից՝ պատու-
հաս համարելով անօգուտ ենք համարում
նորա լուսացնելու համար մտածել ինչ և
իցէ մի միջոց, Եւրոպայի աշխատում է զի-
տուութեան ճանապարհով վերստին հարս-
տութեան այդ մեծ աղբիւրը հասցնել իւր
առաջուկը վիճակին, այդ պատճառաւ շատ
զիտանային, իրանց կեանքը նուիրելով հա-
սարակաց օգտին, անում են բաղմամբ իր-
փոր:

Կեղծութեամբ հետեւի եւրոպական խորհուրդներին՝
հաւասարացնել քրիստոնեաների իրաւունքները
մահմետական հպատակների իրաւունքների հետ
(այն էլ ասելը մեծ բան չէ), այնու ամենայնիւ
հեղինակի կարծեով, նոքա այդ բարի ցանկութիւնն
էլ անիրագործելի կը լինի, որովհետեւ կառավար-
չական փառքում րուսաւորումն պետութեան
թիւնը այդքան խոր արմատներ է գցել երկրի մէջ,
որ նա մինչև անգամ վերին աստիճանի անշար-
ժական է դարձել մահմետական ազգաբնակչութեան
բարձր ու վարքը....

Այդ բաւական չէ, հեղինակը այն համոզմունքի
է, որ Թիւրքաց պաշտօնեաների ամենաազատամիտ-
ների թւում անգամ, որոնք դուցէ այս րօպէիս
էլ իրանց ձեռքում րուսաւորումն պետութեան
ղեկը, շատերը կան որոնք երբեք չեն համաձայնի
հաւասարեցնել մահմետականների հետ քրիստո-
նեաների իրաւունքները, սրտում համոզված լինելով
որ քրիստոնեաները թէ բարայայալ և թէ մաա-
ւորապէս շատ և շատ բարձր են տաճիկ ցեղից:

Ահա մի քաղաքականութիւն, որ կարելի է ա-

նուանել երկրի քաղաքականութիւն.... Թիւրքաց
տարրը վախճանում է աւելի ընդունակ տարրի մըր-
ցութիւնից:

Ահա հայերի անմիջիթար դրութիւնը: Ահա չորս
միլիոն ժողովրդի դրութեան իսկական պատկերը:
Եթէ Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների դրու-
թիւնը կը լուսնայ, եթէ Եւրոպան կաշխատէ բար-
եօրէն նոքա դրութիւնը, նա այդպիսով աւելի կը
սաստկացնէ հայերի տանջանքները, նրանց ցա-
ւերը:

Դա զարհուրելի անարդարութիւն կը լինէր:
Հայերը յոյս ունեն, վերջայնում է հեղինակը,
որ լուսավորված աշխարհը նրանց էլ կը պաշտ-
պանէ, նրանց ձայն էլ կը լսէ, նրանց պահանջներն
էլ առանձնապէս աչքի առջև կ'ունենայ:

ձեր, բազմաթիւ քննութիւններ, կազմուած են միջազգային ժողովներ, ուր ամենայն կողմէրէն հնուա մարդիկ հաւաքուելով, նորան ծաղկեցնելու համար միջոցներ են մտածուած: Եւ ահա այս տարուայ սեպտեմբեր ամսուս կայացաւ Մ միջազգային ժողովը շերամահ կայանի խալիպայի Միլան քաղաքում: Կովկասից ուղարկուած էր այդ ժողովին ներկայ լինելու պ. Զէյլիցը, որ վերադառնալով ներկայացրեց կառավարութեան իւր գեղեցուկ, իսկ ներկայ նոյեմբերի 16-ն կարգաց կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ, որի համառօտ քաղաքացի արժանի եւ համարուած ներկայացնել «Մշակ» ընթերցողաց:

Շերամի (արեւելու որդի) տարախոյսիկ հիւանդութիւնը առաջին անգամ երևացել է Զրանսիայում, յիսուն թւերին: Գիւս 1853 թւականին այդ երկրում հաւաքուել է 26 միլիոն քիլոգրամ բոժոժ (կոկոն), բայց հէնց այդ տարուց սկսել է տարից տարի պակասել, այնպէս որ 1865 թ. հաւաքուած էր ընդամենը 4 միլիոն քիլոգրամ: Զրանսիայից այդ հիւանդութիւնը ձարակուել է և բոլոր արևմտեան եւրոպայում, այնուհետեւ երեւաց և մեղանում, կովկասում, իսկ վերջին տարիներում Եւրոպայի ամենուրեք (Տաճկաստանից), 1859 և 1860 թ. Արքիանապոլսից և Նուխուց, 1861-ից մինչ 1864 թ. բացառապէս Նուխուց: Իսկ երբ այդ հիւանդութիւնը երեւաց և կովկասում, Զրանսիայից և իտալացիք սերմի համար դիմեցին դէպի միջին Ասիան, գիւսուրաբար խալիպային, որը այն ժամանակից մինչև այժմ տուել է եւրոպային ամենալաւ սերմ: Զրանսիայի ակադեմիկոս պ. Պաստերը, և մի և նոյն ժամանակ Միլանի բարձր երկրագործական ուսումնարանի ղեկավար, իտալացի կանտոնին, ցանկանալով Զրանսիայի և իտալիան ազատել խալիպային ահապանից, որը իտալական բոժոժի դեղին և սպիտակ ագիւս տեսակներով, սկսեցին հնարել մի առանձին եղանակ շերամի սերմ հանելու և այդ եղանակը բոլոր միջազգային ժողովներում համարուած է շերամի հիւանդութեան դէմ ամենալաւ միջոց:

Այս տարուայ Միլանի միջազգային ժողովին ներկայ են եղել շերամապահութեան բոլոր անուանի ներկայացուցիչները: Կ. պ. Պաստեր, Կանտոնի, Բելլոսո, Սուզանի, Մետար, Կապոնիպի ներկայացուցիչ 6 կարգի աստիճանաւոր Սասա-Կի և այլք:

Առաջին նիստը եղել է սեպտեմբերի 11-ին (ըստ նոր տոմարի) և նուիրած էր թրթուրների կեանքի երկար կամ կարճ տևողականութեանց պատճառով շերամի հիւանդութեան խնդիրը: Նորանում պ. Մետարը յայտնել է որ շերամապահութեան լաւ արդիւնք ստացվում են միայն Պաստերի եղանակով հանած սերմերից ու առաջարկել է, նախ որոշող պահել ամենափոքր քանակութեամբ, ոչ աւելի մէկ կամ երկու ունեցիկից, երկրորդ՝ որոշելու չը կերակրել չափազանց պարարտ տրեւներով, կերակրել նորանց սննդանոցում կամ խոհանոցում, այլ ոչ որոշող պահել սրահներում և երրորդ՝ դորձ ածել միայն Պաստերի սխեմայով հանած սերմ: Պ. Սուզանի ունեցած այդ սխեմայով սերմ հանելու դորձարանիցը ստացած սերմից Մետարը ներկայ թւում հաւաքել է, ուստաց հաշուով 40—45 փութ կոկոն գրուանքից, իսկ պ. Բելլոսոի հաւատարմից է, որ որոշող առանձին խոհանոցում թեւում ստացել է 60,70 և մինչև անգամ 76 փութ գրուանքից:

Երկրորդ նիստում զիտուող ուշադրութիւն դարձրուած էր սերմ պահելու միջոցների շերամապահութեան յառաջդիմութեան վրա ունեցած ազդեցութեանը հարցին, և այդ անգամ յայտնուեցին հետեւեւ կեղանացութիւնները: 1) արտաքին հանգամանքները, որոնց ենթարկվում են սերմերը ածելուց մինչև նորանցից շերամ դուրս գալը, զգալի ազդեցութիւն ունեն շերամի մեծացնելուն վրա, 2) հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել օդի հիդրոստատիկական դրութեան (ջրային գոլորշիներով նորա լցուելը) և ջերմութեան աստիճանի վրա, 3) քիմասակար է ձևուել սերմը պահել չափազանց գէժ, կամ չափազանց չոր տեղերում, 4) քիմասակար են շերամութեան աստիճանի յանարձակական փոփոխութիւնները և 5) հարկաւոր է հոգալ որ ձմեռը որդիք սերմը պահած տեղում ցուրտը շատ աւելի չը լինի սառչելու աստիճանից: Ա երջին նիստում քննուեցին մի քանի առաջարկութիւններ և հարցեր, որոնք նոյն-

պէս վերաբերում էին շերամապահութեան: Բուսէ յայտնեց սերմի վերա տաքութեան զանազան աստիճաններում իւր արած փորձերը: Գիսիէն յայտնեց զարնան ժամանակում տաքութեան և ցրտի փոփոխութեան շերամի պահելու վերա ունեցած կորստաբեր ազդեցութիւնը, Բոլլէ—իւր փորձերը չոր և խոնավ բնակարաններում պահած որդիքի վրա: Սասա-Կի յայտնեց, որ ինքը արել է փորձեր որդիք վրա տաքացրած օդում և առանց տաքացնելու, չոր և գէժ օդում, լոյսով և կատարել մթութեան մէջ: Պ. Սասա-Կին իւր ազդարարութեանց համար՝ ստացել է մեծ համակրութիւն ժողովի մէջ, որչափ իւր արած մանրամասն փորձերի համար, այնչափ և նորա համար որ բարեխղճութեամբ յայտնել է թէ շերամի այդ տարախոյսիկ հիւանդութիւնը լոյս է ընկել իւր հայրենիքի մէջ: Պ. Կրիլլիէն յայտնել է թէ որովհետեւ Բազիլիէն (Թոյլութիւն, անգորութիւն) հիւանդութիւնը պատճառվում է, ըստ իւր կարծեանց, չափազանց նուրբ խնամողութիւնից, այդ պատճառաւ նա արել է իւր փորձերը որդիքի վրա բաց օդում և կերակրել է նորանց շարունակ միայն վայրի կամ անտառի տրեւներով: Այդ փորձերի արդաւիքներն են. 1) սերմ ածելու առատութեամբ է եղել 2) շարունակ աւելացել է մեղրագործի աղուամիսը: Գաւոր թրթուրների քանակութիւնը, 3) մեղրագործի թրթուրները իրենց սերմից տուել են ամենալաւ կոկոն և 4) կոկոնները աւելի մեծացել են և ամրացել:

Պ. Սուզանի ներկայացրել է սերմը պահելու համար, նոյեմբերից մինչև ապրիլի վերջը, իսկ հարկաւոր դիտուածում և միւս ժամանակներում, մի առանձին տեսակ գործարանի ծրագիր: Օդի բարեխառնութեան փոփոխութիւնները սերմերը պաշտպանելու համար ներկայացրել է մի առանձին տեսակ շերամի յատակագիծ երեք տակ պատկերով (նորանց միջերով արուեստական ձևով ստացրած օդ թողնելու համար): Տիլին ցամաքումն առաջարկել է կազմել ակցիոններական ընկերութիւն իւր նոր հնարած ստոր կերպով մետաղ քաշելու եղանակի դորձարդութեան համար: Այլուից յայտնուել է նաեւ իտալական դեղին տեսակի որդիքի գեղազանգութիւնը եւրոպական սպիտակ կամ կանաչագոյն տեսակի վրա:

Միայն վերջում առաջարկութիւն է եղել շերամապահութեան Մ միջազգային ժողովը համար տեղ ընտրելու մասին. ընտրողութիւնը մնացել է փարիզի վրա, ինչպէս կեղոն ժողովան ուսումնականների և գիտութեան զանազան ձիւղերի մէջ մասնագէտների, գաւոր միջազգային աշխարհագրի ժամանակ 1878 թւականում: Այլ ժողովը համար ընտրուել է նախագահ փարիզի ձմեռանի անդամ Վիլմա, փորձ-նախագահ ակադեմիկոս Պաստեր, ատենադպիրներ (սեկրետար) պ. պ. Ժիլենդ, Լեփի և Սուզանի:

Ս. Յ. Մակարեանց

ՄԻ ԳՐԱՆԻ ԽՕՍԻՔ ՄԵՐ ՄԱՍՈՒՆԻ ՄՍՍԻՆ

Ա երջին ժամանակներս մեղանում սկսեցին շատանալ լրագիրների և օրագիրների թիւը, բայց դժբաղդապէս նոյնանց մեծ մասը իր ուղղութեամբ, աննպատակ և անհամապատասխան է ժողովուրդեան պահանջներին:

Շատերը մեղանից զանազանութեամբ են թէ հայերը դժուարութեամբ են ստանում հայլրագիրներ և արհամարհանքով են կարգում նորանց: Այդ ուղի է, այդ ձմեռան է, բայց մենք, ընթերցողներս չենք արհամարհում, չենք ատում հայոց զրախանութիւնը, մենք ընդհակառակն նորան ընդունում ենք միակ մեր փրկիչ: Բայց մեզ զգլիցնում են մի քանի լրագիրներ, մի քանի անդրդունակ մարդկանց զրկածներ, որոնք մեր ճաշակով չեն և մենք չենք մարտում նորանց:

Մենք ունենք այժմ վեց պարբերական հրատարակութիւն, որոնցից հինգը մի ուղղութեան—կրեական, իսկ մնացեալ, մերը—մեր պահանջմունքին համեմատ:

Ընդունելով կովկասեան և Մարդկութեան հայերի 70% զգալի անտեսներին (երկրագործ, այգեգործ, շերամապահ, մեղրապահ և այլն), 20% վաճառականներ և արհեստաւորներ, իսկ 10% կրեականներ և համեմատելով ժողովուրդեան զանազանքերը պարբերական հրատարակութիւնների թիւի հետ, ամեն մարդ կը համոզվի, որ ներկայիս լրագրութիւնը մեր մէջ ընդունելութիւն զտնելու չէ: Այս լաւ նշան չէ. եթէ այսպէս կը շարունակվի, բոլոր լուսաւորեալ երկրները մեր վերա ծիծաղելու են: Մենք 70% ժողովուրդը չունենք ոչ մի գիւղատնտեսական լրագիր և ինչպէս երևում է չը պէտք է ունենանք էլ:

Նայեցէք, հինգ լրագրողներ, մեր վեճակին և ձեր ուղղութեանը...

Դուք ցոյց էք տալիս ձեզ իբրեւ ազգաւորներ, բայց ինչով էք ապացուցանում այդ: Ինչպէս էք մեզ, զոնեա այդ հինգ հրատարակութիւնից մեր ոչնչացրէք և նրա տեղը գիւղատնտեսական մի լրագիր հրատարակեցէք, իսկ եթէ դուք չէք վարձված գիւղատնտեսականութեան մէջ, հրաւիրեցէք մի գիւղատնտես մի ազգոսով: Գիւղատնտեսական լրագիր ձեռնարկութիւնը մեր մէջ մեծ ընդունելութիւն կը գտնէ:

Մեր բարձրագոյն ձեռնարկը, չըմապատւած պտղատու այգիներով, անմշակ դաշտերով, ջրերով և անտառով, կարող էր մեծ օգուտ տալ մեր խղճայած ազգին, եթէ մոյցներ իր պրօգրամայի մէջ ազատ գիւղատնտեսութիւնը, հրաւիրէր Գերմանիայից և Շվեյցարիայից ազգոսովներ, զարդարէր իր չըմապաքը, իր անմշակ դաշտերը կատարեալ բուսականութեամբ: Դա է մեր միակ յոյսը, դա է միակ միջոցը յառաջանալու, բայց ձեռնարկը հնուացել է իրական օգուտներէն, չէ հասկացել և չէ կամենում հասկանալ ազգի կենսական պահանջները, փոխանակ ազգը լուսաւորելու, նա վարձեցնում է նրա զաւակներն երբայական և այլ մեռած լեզուներով...

Ճամնակ չէ արդեօք մտածել և Սուրբ Եմիանին հրատարակել մի երկրագործական լրագիր:

Բաղրատ Պիճիկեան

ՆԱՄՍԱ ԿՐՈՍԿԱՍՅԱՆ

Նոյեմբերի 12-ին

Բաղրատ Պիճիկեան կատարելով եղելութիւնները խորին կերպով զբաղեցին ուսումնասիրութեան ուշադրութեամբ, նա հրդեհի առաջին քայլերից սկսեց ջերմ համակրել իր եղբայրակից պալմոնիկը, և այս եռանդուն համակրութեան արգասիքը եղան այն ահագին գումարները, որը զոնեց ուսումնասիրութիւնը հարստաւարով ազգերին, նա մինչև անգամ չը խնայեց իր անդամների արեւը թափելու եղբայրակիցներին ազատելու համար բռնաւորական լծից: Զոհաբերութեանց մասնակցում էին հարուստ և աղքատը, եւ տեսայ մի աղքատ պառաւ կին որը տանում էր մի կամից չոր պալմոնական կոմիտէի, նա ասում էր. եւ փող չունեմ, վեր առէք այս չորերը, նրանք հարկաւոր կը լինեն վերջերը կապելու այսպէս ահա համակրութեանը պալմոնիկին բնութում էր պալմոնից սկսած մինչ աղքատիկ խրիկը:

Մովսիս, ինչպէս սիրտ Բուսաստանի, ցոյց տուաւ բարձր աստիճան ազգասիրութիւն պալմոնական դործում, թողած ահագին գումարները որը նա զոնեց, յիշում են այն բազմաթիւ կատարողները, որոնց իւրաքանչիւր որ հասարակութիւնը անսահման ոգեւորութեամբ ճանապարհում էր պատերազմի ասպարէզը, հազարաւոր ժողովուրդը լցնում էր երկաթուղու փոկալը և անվերջանալի կեցցէներով հրաժարական տալիս կամաւորներին, անէժը կանչելով ճանկատանին ցրվում էին վերջապէս:

Իրաւացի է ասում Պետերբուրգի մի օրագրի ֆէլիետոնիստը թէ՛ մենք պետերբուրգցիներս մի բանում կարող ենք նախանձել մոսկովցիներին, այն է, ազգասիրութեանը: Մովսիս իր մէջ ունի այնպիսի պատմական յիշատակարաններ, որոնք սուրբ են իւրաքանչիւր բաւ համար, և արդարեւ ով կարող է անտարբեր նայել Միլիին և Պապարկու արձանների վրա, դու օտարի սիրտը թնդում է այս անմահացած հերոսների քրտնալի տեսնելու, որքան արդեօք մեր թնդալ ճշմարիտ բաւ սիրտը...

Անսահման է ուսումնալ ոգեւորութիւնը, նորա մէջ զարթնել է ազգային ոգին, նա այժմ հետաքրքրված է կատարելով երեւոյթներով: Եւ պարբերիստ ասում է՝ Ղրիմի պատերազմի ժամանակ պաշտոնական Բուսաստանն էր, իսկ այժմ ժողովրդական, ազգային, վեճ նորան որ այս զօրութեան դէմ վերկենայ:

Լրագիրներից, ինչպէս արձագանք հասարակական կեանքի, լուս չը մնաց, ժողովուրդը սկսեց անհամեմատ հետաքրքրութեամբ կարդալ օրագիրներ, հեռագիրներ, մի փոքր և ից կարդալ իմացող չըմապատաց վանկ վանկ կարդում էր օրագիր, ամեն տեղ լսվում էին քաղաքական խօսակցութիւններ: Շատ անշուստ օրագիրներ որոնք զօրել էին մինչև այժմ հետաքրքրութեանց, սկսեցին մեծ քանակութեամբ ծաղկել: Լրագիրներից շատերը դարձան պալմոնիկական, մի քանիսն միջադրում են որպէս քիչ համակրող պալմոնական գործին, վերջինների մէջ է «ՊԱՐՈՇԵՆ»-ը, կատակաբարական շարժաթերթերում երևեցան ծաղրական

պատկերներ ճանկատանի վերաբերեալ, օրինակ, «ВУДНИК» շարժաթերթում ներկայացրած է մի գորեղ բազուկ, որը ստատիկ սեղմվել է մի տաճիկ, վերջինի գլխում գրված է արեւելեան հարց: Իսկ պատկերի տակում—ահա արեւելեան հարցի վեճը, մի և նոյն շարժաթերթի մի ուրիշ համարում կայ մի պատկեր, որտեղ ներկայացրած է մի տաճիկ փաթոված անգլիական վերարկուի մէջ՝ ասում է՝ սա ինձ չէ տաքացնում, իսկ նորա մօտ կանգնած մի ահագին, սպիտակամազ ծիւր, որը ներկայացնում է ձմեռը, ասում է՝ ահա սա քեզ կը տաքացնի, ցոյց տալով մի տղամարդի վերա, որը պատրաստվում է խփելու և որը ներկայացնում է ուսումնականին:

Այսպէս ահա թելադրված հասարակութիւնը սպասում է անհամբերութեամբ ապագայ երեւոյթներին, որոնք գուցէ, առաւել զբաւեն նորա տարուադրութիւնը:

Ն. Աբէլեանց

ՆԱՄՍԱ ԿՐԵՒԱՆԻՑ

Եթէ մի խոշոր հայեացք ձգելու լինենք մեր երեւանու հայ-հասարակութեան պայմանները զրոյթեան բնաւորութեան և նրա շուսաւորութեան վրա, որ լինում է կամաց-կամաց և համարեա թէ մի աննկատելի առաջադիմութեամբ, այլ և միտ դնելով պատեղի ժողովուրդի տառապալ ապրելու եղանակը, կը տեսնենք որ նա շատ յետ է մնացած մարդկային կեանքի քայլափոխում մի թարմ ուժ յառաջանող պայմաններից: Երևանը շատ տարիներ ենթարկված լինելով պարսից հօդ կառավարութեան և երկար ժամանակ մեծացած լինելով նրա մէջ, հայ ժողովուրդը մի ազգաւ բնաւորութիւն չէ ստացել: Տեսնենք փոխեց նա արդեօք պայման ժամանակում իւր բնաւորութիւնը. ոչ, և հետեւապէս բուն հայ ժողովուրդի բնաւորութեան մասին մի և նոյնը կարելի է ասել, ինչ որ հին ժամանակները: Նա մինչև այժմ էլ անհոգ է մնացած ազատ խորհելու իրաւունքից, նա սպասում է ուրիշներից մի տնօրէնութեան: Այստեղ իւրաքանչիւր տան դուռը համարված մարդուցն է կախված կնոջ և որդիքը անց վիճակի բարեկաւորութիւնը: Այնք չի համարեալ վիճակ իր սեփական, անհատական կամքն ունենալ: Եւ այս բոլոր կառավարութեան սանձը հօր ձեռքին է լինում: Ահաւասիկ նոյն կեանքի այդ տեսակ ընթանալն է, որ Երևանու հայ հասարակութիւնը կանգնալով է մի ցաւացուցիչ անապօքութեան մէջ: Ի հարկէ, այդ անապօքութիւնը կը փոխադրվէր շարժականութեան, եթէ հասարակութեան հարուստ դասը ժողովրդական դիտմանը ստացած լինէր, որով կարողանային ժողովրդի միջից վերացնել այն արմատական կոպիտ սովորութիւնները, մաքրել նրանց միջից չարակամութեան նախանձու կրքերը: Իսկ ժողովրդեան աղքատ դասը, նաեւ հին գաղափարով մնացած հարուստ մարդկանց որդիքը իրանց կրթութիւնը ստացած լինելով մի և նոյն նեղ չըմալ մէջ, չեն կարողանում ընդունել իրանց մէջ բացի արտաքին կերպարանափոխութիւնից մի իսկական համոզմունք: Երևանու հայ հասարակութիւնը, ինչպէս որ շատերը կարծում են, վայելում է լուսաւորութիւն: Այդ խօսքերը շատ դուրեկան են ամենքին և շատ քաղցր կերպով հնչում են ոչ միայն մի հայ մարդու ականջին, այլ ընդհանուր մարդկութեան նորաուրախութիւն են պատճառում: Եւ յիշուի, հայ լրագրների էջերում երկար ու բարակ մտքով շարած խօսքեր, որոնք փայլող աստղերի նման յաշորդաբար երևում են և դարձեալ անյայտանում՝ նկարագրում են սղայոց և աղվանց ուսումնասիրաները, թատրոնական ներկայացումները և այլն... Այդ ամենը իսկ և իսկ պնդում է հեռուից լսողներին համոզմունքը Երևանու հայ հասարակութեան յառաջադիմութեան մասին:

Բայց եթէ արժանապէս քննելու լինենք այդ ուսումնասիրութիւն և աչք չընցնող երեւոյթների ներքին կողմերը, մենք կը գտնենք մի անմիջեւ զարգարկութիւն:

Մենք բոլորովին չենք էլ ուրանայ, որ ներկայ լուսաւոր դարս բաւական փոփոխութիւն է տալիս նոյն կեանքին և նոր գաղափարներ են ներմտնում: Այդ նոր գաղափարներ վայելողները միայն հարուստ մարդկանց որդիքն են, որոնք աշխատում են իրանց որդեգր ուղարկել այլ և այլ քաղաքներ, մեծ մասամբ թիֆլիսի գիմնազիաները ուսում և գիտութիւն սովորելու, որով կարողանան խորասկել այն հնութեան պարսպները, որոնք մէջ հասարակութիւնը երկար դարեր ազատ չունէ կարողացել քաշել: Բայց ի հարկէ դա մի աննկատելի կերպարանափոխութիւն է նոյն կեանքի մէջ

միջոցներ խառնել և նախապայմաններ վճարող
կար սովորութիւնները հաստատ հիմքն են դրել
երեւանցի կեանքի բոլոր շարժումներին մէջ:

— Եւ զանազան ի նշանակաւոր զգացում Մ. Կ.

յո խոցելիքն զմանաւոր զգացումս

Ֆիզիքս քսմա Դ փոքրիկ Զ մանկամ

մանա Զ խառնաւոր և զմանաւոր

զգացումս զմանաւոր զգացումս

— Եւ զանազան ի նշանակաւոր զգացում Մ. Կ.

«Правит. Вѣстн.» ռուս պաշտօնական լրագրում
հրատարակում է Բարձրագոյն հրաման, որ յուն-
վարի 1-ին 1877 թիւ ամիսը Ռուսաստանում
մարտական մէջ մարտ կը վերցնուի և ոսկի վե-
ստուներ ելիէ ծախել ապրանքներ առկայիսով, հա-
սանքի մարտը պէտք է վերցնել ոսկով: Բոլոր ապ-
րանքների մարտը, որ մինչև յունվարի 1-ը հա-
տուցված չի լինի, պէտք է նոյնպէս ոսկով վերցնուի:

Մայրաքաղաքների ռուս լրագիրները հաղոր-
դում են, որ Ռուսաստանում նորերում կազմվել է
ըն ազգ տն և րի մի ընկերութիւն, որի նպատակը
պէտք է լինի բացառապէս հետազոտել բնագի-
տական հոգովից կովկասը և կրիմը: Նոյնպէս խո-
սում են բնագիտութեան սիրողների մի ընկերու-
թեան մասին, որ կազմվում է Անդրկովկասում և
Այդ շատ ուրախակալ լուրերն են:

ՄՍՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են «Աշխարհաճակ
դերասանութիւն և երգչուհի տիկին Պատիկ պատուեց
Մատիկա քաղաքը իր այցելութեամբ: Ասում են որ
գուցէ այդ վերջին անգամ կը լինի, որովհետև չորս-
հայի երգչուհին տկար է: Գեու այս տարի փարիզի
թիֆլիսի խորհրդով նա չէր ուզում գալ Ռուսաս-
տան: Այդ հանգամանքը ի հարկէ շատ ցաւալի է
թէ իրան արհեստի, թէ խտրութեան շարժում:

ՄՍՍԿՎԱՅԻՑ գրում են մեզ և հետևեալը՝ «Ար-
գէն վերջացել է տեղիս առեւտրական փոխառու-
ւանքի գործը: Նրկապահների թագաւոր, դոկ-
տոր Ստրուտեբոգ պիտի կամ Գերմանիա վերա-
դառնայ, իսկ եթէ նրան իր հայրենիքում չընդու-
նեն, այն ժամանակ դատարանի վճռով պիտի աք-
սորվի Օմենցիկի նահանգը: Ինչպէս հաղորդում են
և Եւրոպական լրագիրները նրան ընդունում են Գեր-
մանիայում և արդէն Բեռլինի ամենահայտնաւոր
հիւրանոցներից մինի մէջ պատրաստված է նրա
համար փառաւոր ընկալարանը»

Ձանգեղուրի գաւառի ԳՕԻԻՍ գիւղից մեզ գը-
րում են որ այս տարի յիշեալ գաւառը կրում է
ամեն տեսակ անապատութիւններ: Բայց իսկ և խոր
ծին, ցրտեր, անասունների հիւանդութիւն, ասա-
տիկ կարկուտ, որ վնաս տուց արտերին: Իսկ հոկ-
տեմբեր ամսին եղած սաստիկ քամիները ջարդե-
ցին պտղատու ծառերը և թիֆլիսից: Այս տարի
երաշտութիւն էլ կար գաւառում ամեն տեղ:

ԳՕԻԻՍ գիւղից գրում են մեզ որ շատ ժամա-
նակ է որ տեղացի բնակիչները անհամբերութեամբ
սպասում են արեւուն մի վարժատան բացվելուն,
իրանց երեխաներին ուսում տալու համար: Զար-
մանալի չէ, որ Ձանգեղուրի գաւառի բնակիչները,
մեծ մասամբ հայեր լինելով, չեն աշխատում իրանց
սեփական դպրոց ունենալ:

Այս օրերս մենք պաշտօնապէս ստացանք «Վը-
շակի լրագիր եկող տարուց չարաթը երկու անգամ
հրատարակելու թղթաւորութիւնը: Տարեկան գինը ու-
րեմն կը լինի 7 րուբլ: Հրատարակում ենք մեր բա-
ժանորդներին շուտով գրելով, բայց մի և նոյն ժա-
մանակ խնդրում ենք որ և ներկայ տարուց մնա-
ցած ապաւինները բարեհաճին շուտով հասցնել
խմբագրութեանը:

Նոյեմբերի 29-ին թիֆլիսի քաղաքային Գու-
մայի նիստը կրկին չը կայացաւ: Հարցնում ենք
արդե՞ք մեր քաղաքային պատգամաւորները նա-
յում են ինքնավարութեան վրա, որպէս մի խա-
ղայիկի վրա... Հարցնում ենք արդե՞ք ինչ իրա-
ւունքով ձայնաւորների մեծ մասը, որոնք նախա-
պատգամ են տալիս սենեակում նստել, ստիպում են
միշտ մի և նոյն 24 մարդ ներկայ գտնվել նիստե-
րում: Արդե՞ք այն ձայնաւորները որոնք երբեք
չեն յաճախում նստել, չեն գրում թէ իրանց
պատգամաւորութիւնը չեն կատարում և անհրկիւզ
կանգնել անդիմութիւն է նրանց հոգովից չը կարող
դառնալով, կամ չը կամենալով այցելել նստերը՝ չը
հրաժարվել իրանց պաշտօնից և չը տալ իրանց
տեղը կանդիդատներին:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտ-
նում է ընդհանուր գիտութեանը, որ համեմատ
քաղաքային Գումայի կարգադրութեան, քաղա-
քային վարչութեան ներկայութեամբ առաջիկայ
դեկտեմբեր ամսի 8-ին նշանակվում է անդրախո-
սութիւն յունվարի 1-ից 1877 թիւ, երբ տարի
ժամանակով, կապալով տալու համար կշիռներից
և չափերից վերցնելով քաղաքային արդիւնքի հարկը
համեմատ վարչութեան մօտ եղած կոնդիցիաների:
Ուրեմն այն անձինք, որոնք կամենում են մաս-
նակցել անդրախոսութեան մէջ, պէտք է ներկա-
յան են օրինաւոր դոկումենտներ և գրաւակներով,
որոնք հաւասար պէտք է լինեն կաղապարութեան
տարեկան գումարի կէսին և որոնք պէտք է բաղ-
կանան կամ առ ձեռն փողից, կամ կրեդիտական
բանկային և կամ թէ այլ պրօցէստական թղթե-
րից: Թայտնել կարելի է թէ բառացի կերպով և
թէ մերձիկ ձրարներ միջոցով մինչև 2 ժամ կեն-
տրալ ժամը 12-ը:

րից յետոյ: Անդրախոսութեան հետեանքը առա-
ջարկված կը լինի Գումայի վերջնական վճիռ:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում
է ընդհանուր գիտութեանը, որ համեմատ քաղա-
քային Գումայի վճիռն, քաղաքային վարչութեան
ներկայութեամբ առաջիկայ դեկտեմբերի 10-ին
նշանակվում է անդրախոսութեան առանց կրկնա-
նդրախոսութեան, յունվարի 1-ից 1877 թիւ երբ
տարի ժամանակով կապալով տալու համար ձիա-
ն և րից վերցնելով հարկը, համեմատ վարչութեան
մէջ եղած կոնդիցիաների: Ուստի այն անձինք,
որոնք կը կամենան մասնակցել անդրախոսութեան
մէջ, պէտք է ներկայացնեն օրինաւոր դոկումենտ-
ներ և գրաւակներով, որոնք հաւասար պէտք է
լինեն կաղապարութեան տարեկան գումարի կէ-
սին և որոնք պէտք է բաղկանան կամ առ ձեռն
դրամից, կամ կրեդիտական բանկային, և կամ թէ
այլ պրօցէստական թղթերից: Թայտնել կարելի է
թէ բառացի կերպով և թէ մօրած ձրարների մի-
ջոցով: Անդրախոսութեան հետեանքը ներկայաց-
ված կը լինի Գումայի վերջնական վճիռ:

Մի պարոն Թիֆլիսի խնդրում է մեզ յայտ-
նել որ յանձն է առնում ամեն տեսակ թարգմա-
նութիւններ թէ ռուսաց լեզուից ֆրանսիերէն և
գերմաներէն լեզուներէն, և թէ փոխադարձապէս:
Հասցէ՝ Воронцовская Набережная, Զորջանի
տուն, № 3.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ
ԱՆՏԵՍԱԼ ԵՒ ՆԵՐԿԱՆ

Որքան, որքան գործողութիւններ, տեղաւի-
թէ ուրախակալ, սարսափելի, թէ հաճելի անց-
քեր են կրկնվում մարդկութեան կեանքի,
մարդկութեան պատմութեան մէջ. ասում են
կրկնվում, որովհետև շատ անգամ նորա մի
նոր, ինքնուրոյն, անօրինակ անցքեր չեն, այլ
նոյն իսկ անցքեր կրկնվում են, գուցէ մի
այլ դէմքով, այլ դիմակով, բայց էութիւնը
նոյնն է ու նոյնը: Վերջերք միջնադարեան
ընդհանուր պատմութիւնը, ներդրութիւնը քա-
ղէք, սիրելի ընթերցող, թերթիկ այդ գրքի
երեւանքը. դուք յանկարծ կանգնէք ստաւծ
այդ գրքի այն տեղում, ուր մեծ տառերով
գրած է «խաչակրների արշաւանք»: Գուցէ
չէք փառհասում առանց մի քանի վայր-
կեանք, գուցէ թուղթեր կանգ առնելու, կրկին
թերթիկ: Նոյն իսկ այդ մի քանի վայրկեա-
նում, թուղթերում՝ որքան, որքան մարդ,
ի հարկէ տեղաւի մարդեր են անցնում ձեր
գրքի միջոց: Գուցէ իմանում էք յանկարծ,
որ համարեա ութ հարիւր տարի սրանից
առաջ քրիստոնեաները վերին աստիճանի
բռնակալութեան մէջ, մարմնահարած, մա-
շած, ընկած վերին աստիճանի անբարոյական
սկզբունքներ թուրքերի ձեռքերին, վախկնում
էին ազատ մանգալ, ազատ գործել ինչ եմ
ասում՝ ազատ աղօթել դէպի Աստուած.

բայց վայ նոցա՛ կեկեղեցին անգամ անար-
գուած էր: Քրիստոսի գերեզմանի տուրք տա-
մարի անօթիւնը քրիստոնեական հաւատի
սրբութիւնները պահպանելու չէին ծառա-
յում: Նորա ևս թուրքերի պիտոյքներին էին
ծառայում: Բայց ամեն բան իւր վերջն ունի.
բայց վերջ գիտնելով իրանք, ներդրութիւն
կողմերը, չէին նոցա զորան համբերում էին.
կիրճ գնդները արեւմտեան ազգերն էին վա-
ռուած քրիստոնեական սուրբ հաւատով.
ապականական անկեղծ գերազանցութեամբ:
Շատ ժամանակ չի անցնի, սիրելի ընթեր-
ցող, ընդհանուր պատմութեան, ի հարկէ ոչ
միջին, այլ նոր դարերի, դուք կը կարդաք
նմանապէս մեծ ու խոշոր տառերով գրած
արեւելեան հարցի վերաբերութեամբ Օսմա-
նեան տէրութեան քրիստոնեաների ապստամ-
բութիւնը և պատերազմը՝ Սերբիայի հետ,
գուցէ և Ռուսաստանի պատերազմը թիւր-
քիայի հետ, գուցէ և այլապէս, որը չեմ
կարող իսկապէս գուշակել: Մի ութ դար սո-
րանից առաջ քրիստոնեաները կրկին արեւե-
լեան սելջուկեան թուրքերի ձեռքին էին, իսկ
ա՜հ քանի մի դար է միւս արեւելեան քրիս-
տոնեաները նոցանից ոչ պակաս օսմանեան
թուրքերի ձեռքերին են: Նոյն հաւատի մար-
դիկ՝ նոյն հորու բարբարոսներ... Այն ժա-
մանակուայ Պետրոս Առեւանի հոգեւոր խոս-
քերն են կրեւմնաւոր ժողովում 1095 թ.
Ուրքան պապի կարգադրած հոգեւոր ձառի
փոխարէնը 1875 թ. Էնդեղովիայի ու Բոս-
նիայի ապստամբութիւնը, իսկ յետոյ և Սեր-
բիայի ու նորա զաշնակից Չերնօգորիայի պա-
տերազմը էր արեւմտեան Օսմանեան տէրու-
թեան դէմ: Վերջը կամ առաջիկայ վեց մեծ
տէրութիւնների կոնֆերանցը և կամ պատե-
րազմ, որը շատ ապասել է: Բայց ինչպէս
հարցը. հարցը քրիստոնեաների, առանց բա-
ցառութեան, վեճակի բարեկամացնելն է. ու-

րեմն կարող է լինել այստեղ արդե՞ք այդ վեց
մեծ տէրութիւնների մէկի մասնաւոր շահերը
և Բարձր Գուգը պիտի շարունակէ արդե՞ք
իւր անպահանջ կամակորութիւնը այդ վեր-
ջին աստիճանի նշանաւոր հարցի վերաբերու-
թեամբ, որը ներկայացնում է կեանքի անհրա-
ժեշտ խնդիր:

Իսկ խեղճ հայաստանցի հայը ոչնչով
համարեա իր անբաւականութիւնը չը ցոյց
տուց, նորա արիւնք երանքների մէջ նոյն
սուր կերպով և զանազալ էր շրջում, այն
ինչ նորա վեճակի, գուցէ նորանից և աւելի
լաւ վեճակի այլ քրիստոնեաներ արեւան հե-
ղեղներ էին թափում պատերազմի դաշտի
վերա բնութիւնից պարզեւած այն դրութեան
համար, որը արտայայտում էր «ազատութիւն»
բառով:

Միւսնացիները, կարելի է համարձակ ա-
սել իրանց ապահովացրին, թէպէտ և դուր
կատարելու համար ամիսներ, գուցէ և տա-
րիներ քաշե: Բայց հայի վեճակը կախուած է
հանգամանքներից և մեծ տէրութիւնների
միակ կամքից:

Լայպցիգ, Նոյեմբ. Ա. Ա.

ԹԻՒՐԳԻՍ

Ռուս լրագիրները հաղորդում են որ թիւր-
քիան պատերազմի ժամանակ կարող է ու-
նենալ գործ 644,500 մարդուց բաղկացած:
Բայց արեւոք ճշմարիտ է որ, ինչպէս հա-
ղորդում են նոյն լրագիրները, թիւրքիայում
կազմակերպված են այժմ հայերից 30
նոր բառախմբներ 24 հազար մարդուց բաղ-
կացած: Այդ հարցի պատմականը մենք
սպասում ենք Կ. Պոլսի հայ լրագիրներից:
Բազմազան հաղորդում են որ իւր թէ թուր-
քերը խախտեցին զինադադարի ժամանակ
նշանակված թիւրքիայի և Չերնօգորիայի գծի
սահմանը, բայց յետ մղվեցան:

ԱՆԳԼԻԱ

Այժմ երբ որ հասել է Կ. Պոլսի կոնֆե-
րանցիայի բացման ժամը Անգլիայի հասարա-
կական կարծիքի վերաբերեալ թիւրքիայից
Բոլքարիայում գործված սարսափելի բարբա-
րութիւնների պատճառով կրկին նոր ոյժ
ստացաւ: Ամեն տեղ լինում են մետրիկներ,
Անգլիայի բոլոր նահանգներում ժողովներ են
լինում, որտեղ արտայայտվում են մտքերը
ընդդէմ թիւրքիայի բարբարոսութիւնների և
Անգլիայի այժմեան միջնադարութեանը բռնած
թիւրքիայի բարեկամական բողոքականութե-
ան: Այդ բռնական է նորերում Անգլիայի
բոլոր նահանգները 1000 պատգամաւորներ
ներկայացան լոնդոն, իրանց տէրութեան այժմ-
եան քաղաքականութեան դէմ բողոքելու
համար: Այժմ կոնֆերանցիայի հետեանքը
կախված էր ինչ նորանից, արեւոք Անգլիայի
կողմից օգտագործելու ներկայացուցիչը կեն-
թարկի թէ ոչ հասարակական կարծիքի այն
հոսանքին, որ հետզհետէ յայտնվում է իր
հայրենիքում: Եթէ նա ճշմարիտ ստիպված
կը լինի հետեւի այդ ուղղութեանը, այն
ժամանակ կարելի է կարծել որ անգլիական
այժմեան միջնադարութեանը և զինաւորապէս
պ. Գիլդեյթի մեծ վտանգ է սպաւնում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մասիս» լրագրում հաղորդվում է թէ թիւր-
քիական պատերազմի յոյններ, նիկտելով որ թիւրքաց տե-
րութեան վրա ճնշում է ներգործվում զբաղ, որպէս
զէ թիւրքեան հարձէ իրաւունքներ միմյան թիւր-
քիական պատերազմի, կամենում են կազմել մի
ադրէս (աղերսագիր), որ և դիտաւորութեան ու-
նեն ներկայացնել Բարձրագոյն Գրանդ, յունադա-
ւան պատերազմի միջնորդութեամբ: Ստորագրու-
թեան թերթերը արդէն սկսվում են մտնել պա-
տերազմաւոր և քանի մի օրից յետոյ պիտի ներ-
կայացրած լինեն տէրութեանը: Յիշեալ աղերսի մէջ
յոյններ տէրութեան ուշադրութիւնը դարձնում են
երկու կետերի վրա՝ նախ որ եթէ ապստամբված
նահանգներին տրվեն առանձնական իրաւունքներ
և քաղաքական արտօնութիւններ, այն առաջին
վերաորդութիւնները կը դադարեն որպէս վար-
ձաւորութիւն արած ապստամբութեան, յեղափո-
խութեան և արեւմտահեղութեան համար և կարող
լուծութեան և արեւմտահեղութեան համար և կարող
են մեծ վտանգ ներկայացնել Օսմանեան պետու-
թեան գոյութեան համար, որ կազմված է զա-

նազան ազգութիւններից: Երկրորդ որ եթէ մի
որ և է ժամանակ հարկաւոր և անհրաժեշտ կը
լինի չորհել առանձին արտօնութիւններ, այդ
չորհը զինաւորապէս պէտք է տրվի յունաց աղ-
ղին, որի ձեռքից և նվաճվեցաւ այն երկիրը, որ
այժմ կազմում է եւրոպական թիւրքիայի մասը:
Բայց յունաց ազգը հրաժարվում է առաջին տեղ
բռնելու ցանկութեանից և պահանջում է միմյան
մնացած հպատակ ազգերի հետ հաւասար իրա-
ւունքներ:

«Մասիս» լրագիրը տպելով իր էջերի մէջ յոյ-
նների աղերսի, բովանդակութեամբ, այն յայտն է
յայտնում, որ թիւրքաց տէրութիւնը չի անի ոչինչ
խտրութիւն իր այլ և այլ ազգութիւններին պատ-
կանող հպատակների մէջ, որի մասին տէրութիւնը
յայտնած էր օտար պետութիւններին, բայց մի
քանի պետութիւնների կողմից արած պահանջների
պատճառով, հարցնում է՝ արդե՞ք հարկաւոր չէր
լինի որ և հայոց ազգը, որպէս ամենահին և միշտ
տէրութեանը հաւատարիմ ազգ, ձայն բարձրաց-
նէր և բողոքելով առաջարկվող տարբերութիւն-
ների դէմ, խնդրէր Բ. Գուգը որ բոլոր իրաւունք-
ները և արտօնութիւնները չորհված լինեն հաւա-
սարապէս բոլոր հպատակ ազգութիւններին առանց
որ և է խտրութիւն անկող: Միթէ, հարցնում է
լրագիրը, թիւրքիայում բնակվող երեք միլիոն հայ
ժողովրդից տուած աղերսը պակաս կշիռ և նա-
նակութիւն կունենայ, քան թէ յոյների աղերսը,
որոնք իրանց թուով հազիւ թէ թիւրքիայի հայերի
կէսն են կազմում: Վերջապէս լրագիրը առաջար-
կում է և հայերին մի աղերս ներկայացնել թիւր-
քաց տէրութեանը և աւելացնում է որ հայերին
այդ շատ հեշտ է անել՝ նոքա ունեն Կ. Պոլսում
պատգամաւորների աղապիս ժողովի որ ներկայա-
ցուցի է ամբողջ հայոց ազգի և կարող է ուրեմն
պատրասել մի աղերս երեք միլիոն հայ ազգի կող-
մից: Այդ բանի վրա «Մասիս» ազգային վարչու-
թեան ուշադրութիւն է դարձնում և հրաւիրում է
նրան անել հարկաւոր կարգադրութիւններ աղ-
րեսը ներկայացնելու համար:

Ամերիկայից հաղորդում են լրագիրներին որ
Ամերիկայի միացեալ Նահանգների նախագահ ըն-
տրվեցաւ ոչ թէ օստրակապիտալական կուսակցութեան
ներկայացուցիչ պ. Տիլդէն, այլ հանրապետական
կուսակցութեանը պատկանող պ. Հայս: Սկզբից
կարծում էին որ երկու կանդիդատներից ձայների
բազմութիւնը ստացաւ պ. Տիլդէն, բայց երբ ա-
ւելի մեծ ուշադրութեամբ վերատուգեցին ընտրու-
ական թերթերը այն նահանգներին, որոնք անորոշ
քաղաքական գոյնի և անորոշ ուղղութեան են
պատկանում, համադրեցան թէ պ. Հայս ձայների
բազմութիւն ստացաւ: Դա՞միպատկանական կուսակ-
ցութիւնը մեղադրում է այժմ հանրապետականնե-
րին, թէ այդ վերջինը ընտրողութեան մէջ խաբե-
բայութիւն է գործածել:

«Times» լրագիրը ասում է որ Գերմանիան
երբեք չի ուղենայ որ Անգլիան պատերազմ սկսի
Ռուսաստանի հետ: Ի դուր են ասում իւր թէ
իշխան Բիսմարկ կը ցանկանա որ երկու պետու-
թիւններն էլ թուլանան: Գերմանիան և Անգլիան,
ասում է լրագիրը, միմեանց մէջ մեծ համակրու-
թիւն ունեն և Գերմանիան համարում է Անգլիա-
յին քաղաքական ազատ կենտրոն, որի գաղա-
փարները՝ պաշտպանելով լուսաւորված աշխարհը
յեղափոխութեան, ուղեցոյց են համարվում Եւ-
րոպայի համար:

Անգլիական լրագիրները հաղորդում են որ
վերջին օրերը սաստիկ մրրկներ են տրեւում ամ-
բողջ Բրիտանեան կղզու ծովի ափերի վրա:

Մի քանի ֆրանսիական լրագիրներ հաղոր-
դում են մի շատ ցաւալի լուր, այն է որ այս օրերս
վախճանվեցաւ երեկի գերմանացի հայադէտ, պ.
Պեռման: Եթէ այդ լուրը կը ստուգվի, մենք
մեզ պարտաւորութիւն կը համարենք կարճ կերպով
ժամօթացնել մեր ընթերցողներին երեկի գիտնա-
կանի կենսագրութեան հետ:

— Հեռագրերը հաղորդում է որ հաւանականու-
թիւն կայ թէ ներքին գործերի մինիստր Ֆրան-
սիայում կը նշանակվի պ. Ժիւլ Սիմօն: Մի քանիս-
ներ կարծում են որ այդ կը լինի մեծ քաղաքական
սխալ՝ ֆրանսիական այժմեան կառավարութեան
կողմից, որովհետև վերջին ժամանակներից պ. Սի-
մօն յայտնվեցաւ որպէս անգոյն մարդ, առանց հա-
մոզմունքի և ոչ մի կուսակցութեան չը պատկանող:

ՄԱՐԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Նկատ 1877 թիւից «ՄՇԱ» լրագիրը կը հրատա-
րակի շարաթը երկու անգամ: Տարեկան գինը 7
րուբլ է, կէս տարվան 4 րուբլ: Նոքա, որոնք փո-
ռնեն ուղարկած խմբագրութեանը՝ գրքերի հա-

